

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/13»**

ք. Երևան

«26» 11 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կանժիլստորոյ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Գեղամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի գ. Դովեղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ժամկետով կատարման ժամկետ է սահմանվում 450 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N1 և N2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 743 233 220 (յոթ հարյուր քառասուններեք միլիոն երկու հարյուր երեսուններեք հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ, որից 123 872 203 (մեկ հարյուր քսաներեք միլիոն ութ հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր երեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2020թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է 76 746 500 (յոթանասունվեց միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից 12 791 083 (տասներկու միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար ութսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի, ինչպես նաև կանխավճարի չափով ծախսերի բաշխման և դրա շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամանակացույցի վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՃԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ), բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառու:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 90001023752

ՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

Ս. Մկրտչյան
(ստորագրություն) 02565827

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Կանժիլստրոյ» ՍՊԸ

ք. Էջմիածին, Վոսա Կոստանյան 5

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

ՀՀ 11500419714700

ՀՀ 03308709

Տնօրեն
Ս. Գեղամյան
(ստորագրություն) 4.S

Ստորագրություններ

Ստորագրություն

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Տավուշի մարզի գ. Դովեղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման

ՀՀ դրամ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	միավորի արժեքը	ընդամենը
1	2	3	4	5	6
1,1 Համաշինարարական աշխատանքներ					
Հողային աշխատանքներ					
1	III-րդ կարգի գրունտի մշակում փոստրակում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	561.00	689.50	386810
2	Նույնը, բարձրով ավտոմեքենաների վրա	խմ	1509.00	541.75	817501
3	III-րդ կարգի գրունտի մշակում խրամուղիներում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	680.00	541.75	368390
4	Փոստրակի հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	71.00	985.00	69935
5	Գրունտի ետլիցք բուլդոզերով հատակների տակ	խմ	1200.00	295.50	354600
6	Գրունտի տոփանում օղածնշական ձեռքի տոփանիչով	խմ	1200.00	394.00	472800
7	Գրունտի ետլիցք հիմքերի ծոց ձեռքով, տոփանումով	խմ	112.00	394.00	44128
8	Ավելորդ գրունտի տեղափոխում	խմ	1509.00	985.00	1486365
Ընդամենը հողային աշխատանքներ					4000528
Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր					
9	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով	խմ	56.00	44325.00	2482200
10	Խամբարաբետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի	խմ	58.00	44325.00	2570850
11	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	340.25	68950.00	23460238
12	Ամրան Փ8A240C	տն	8.38	354600.00	2969810
13	Ամրան Փ16A500C	տն	6.34	344750.00	2186025
14	Ամրան Փ18A500C	տն	5.55	344750.00	1912949
15	Ամրան Փ28A500C	տն	0.13	344750.00	43852
16	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	38.50	44325.00	1706513
17	Խամբարաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B -7,5 դասի	խմ	8.00	44325.00	354600
18	Բետոնե աստիճանների պատրաստում -3,3 նիշում B-7,5 դասի բետոնով	խմ	1.10	44325.00	48758
19	Նույնի, բետոնե հիմնատակի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	3.50	44325.00	155138
20	Նույնի, 300մմ հաստ միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.70	44325.00	31028
21	Արտաքին պատերի երկշերտ ջրամեկուսացում բիտումի մածիկով	քմ	107.00	788.00	84316
22	Ներքին պատերի միաշերտ ջրամեկուսացում բիտումի մածիկով	քմ	175.00	689.50	120663
23	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	7.40	68950.00	510230
24	Ամրան Փ8A240C	տն	0.51	354600.00	180846
25	Ամրան Փ22A500C	տն	1.74	344750.00	600555
26	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.23	669800.00	155461
27	Միաձույլ ե/բետոնե պարզունակների B-20 դասի բետոնով	խմ	16.00	68950.00	1103200
28	Ամրան Փ 8A240	տն	0.36	354600.00	128152
29	Ամրան Փ12A500C	տն	0.30	344750.00	104873
30	Ամրան Փ18A500C	տն	0.52	344750.00	179960
31	Ամրան Փ25A500C	տն	0.09	344750.00	32407
32	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.01	669800.00	4890
33	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ. B-20 դասի բետոնով	խմ	226.55	68950.00	15620623
34	Ամրան Փ6, 8A240C	տն	2.04	354600.00	724341
35	Ամրան Փ10A500C	տն	2.40	344750.00	826986
36	Ամրան Փ12A500C	տն	13.61	344750.00	4693254
37	Ամրան Փ16A500C	տն	0.56	344750.00	192612
38	Ամրան Փ18A500C	տն	0.06	344750.00	22064
39	Ամրան Փ22A500C	տն	2.11	344750.00	728526

40	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.29	669800.00	196251
41	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	0.47	59100.00	27777
42	Ամրան Փ6A240	տն	0.02	354600.00	5674
43	Ամրան Փ12A500C	տն	0.07	344750.00	22409
44	Ամրան Փ16A500C	տն	0.02	344750.00	5171
45	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում 0,00 նիշի վրա B-20դասի բետոնով	խմ	52.70	68950.00	3633665
46	Ամրան Փ6A240	տն	0.10	354600.00	33687
47	Ամրան Փ12A500C	տն	1.89	344750.00	650199
48	Միաձույլ ե/բ հեծանի պատրաստում B-20 դասի բետոնով Մ<-2	խմ	1.00	68950.00	68950
49	Ամրան Փ8A240	տն	0.03	354600.00	9929
50	Ամրան Փ18A500C	տն	0.06	344750.00	21719
51	ՄՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում -2,85 դեպի 0,00 նիշ B-20 դասի բետոնով	խմ	1.90	68950.00	131005
52	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.50	44325.00	22163
53	Ամրան Փ8A240	տն	0.05	354600.00	18723
54	Ամրան Փ16A500C	տն	0.27	344750.00	94427
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր				68877664
	ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				
55	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	63.90	68950.00	4405905
56	Ամրան Փ8A240C	տն	2.49	354600.00	884475
57	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.13	344750.00	45162
58	Ամրան Փ22A500C	տն	7.45	344750.00	2569215
59	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.01	669800.00	6966
60	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0.50	68950.00	34475
61	Ամրան Փ8A240C	տն	0.02	354600.00	8298
62	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.05	344750.00	17651
63	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	6.80	68950.00	468860
64	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	141.54	68950.00	9759183
65	Ամրան Փ6, 8A240	տն	3.08	354600.00	1091264
66	Ամրան Փ6, 8A240	տն	1.19	354600.00	421478
67	Ամրան Փ8A500C	տն	2.02	344750.00	695312
68	Ամրան Փ12A500C	տն	1.50	344750.00	515918
69	Ամրան Փ16A500C	տն	4.68	344750.00	1614499
70	Ամրան Փ18A500C	տն	0.12	344750.00	39729
71	Ամրան Փ25A500C	տն	0.74	344750.00	256460
72	Ամրան Փ28A500C	տն	0.22	669800.00	146686
73	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.22	669800.00	146686
74	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	29.21	68950.00	2014030
75	Ամրան Փ6, 8A240	տն	0.60	354600.00	214441
76	Ամրան Փ12A500C	տն	1.60	344750.00	551876
77	Ամրան Փ18A500C	տն	0.18	344750.00	62055
78	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	162.78	24625.00	4008556
79	Նույնի բետոնացում B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	103.18	68950.00	7114261
80	Ամրան Փ6, 8A240C	տն	0.63	354600.00	224948
81	Ամրան Փ10A500C	տն	8.93	354600.00	3168316
82	Ամրան Փ12A500C	տն	7.86	344750.00	2709425
83	Ամրան Փ16A500C	տն	1.18	344750.00	405150
84	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1.91	54175.00	103474
85	Ամրան Փ6A240	տն	0.06	354600.00	20567
86	Ամրան Փ12A500C	տն	0.25	344750.00	84809
87	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3,3նիշի վրա B-20դասի բետոնով	խմ	221.50	68950.00	15272425
88	Ամրան Փ6A240	տն	0.41	354600.00	147017
89	Ամրան Փ12A500C	տն	19.46	344750.00	6707801
90	Ամրան Փ14A500C	տն	5.47	344750.00	1887058
91	Ամրան Փ18A500C	տն	0.01	344750.00	4482
92	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով Մ<-1	խմ	6.80	68950.00	468860
93	Ամրան Փ8A240	տն	0.18	354600.00	65105

93	Ամրան Փ18A500C	տն	0.37	344750.00	126592
94	Միաձույլ ե/ք հովհարի պատրաստում +2,7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՄ-1, +հեծան ՄՀ-1)	խմ	1.70	68950.00	117215
95	Ամրան Փ8A240	տն	0.03	354600.00	10177
96	Ամրան Փ8A500C	տն	0.07	354600.00	25815
97	Ամրան Փ12A500C	տն	0.01	344750.00	2758
98	Ամրան Փ16A500C	տն	0.05	344750.00	15859
99	Ամրան Փ18A500C	տն	0.02	344750.00	5171
100	Բետոնե աստիճանների պատրաստում 0,00-ից դեպի +0,45նիշ B-7,5 դասի բետոնով	խմ	2.30	44325.00	101948
101	ՄՄ-1 Աստիճանի միաձույլ ե/քբետոնե սալի պատրաստում +0,45 դեպի +3,3նիշ B-20 դասի բետոնով	խմ	1.90	68950.00	131005
102	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.50	443250.00	221625
103	Ամրան Փ8A240	տն	0.05	354600.00	19397
104	Ամրան Փ16A500C	տն	0.27	344750.00	94427
	Ընդամենը ե/քբետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				69088177
	Միջնորմներ				
105	Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	485.98	3940.00	1914761
106	Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	159.71	22655.00	3618230
107	Ամրան Փ8մմ	տն	3.73	344750.00	1284241
	Ընդամենը միջնորմներ				6817232
	Դռներ և պատուհաններ				
108	Այլամինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաքին դռներ	քմ	36.31	73875.00	2682224
109	Այլամինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ)	քմ	1.92	68950.00	132384
110	Այլամինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1.20	68950.00	82740
111	Այլամինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խույ) մաս	քմ	17.04	64025.00	1090986
112	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2.30	39400.00	90778
113	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խույ) մաս և V-2 խույ վիտրաժ	քմ	25.03	34475.00	862909
114	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտալոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԷ Դ-1	հատ	14.00	73875.00	1034250
115	Ներքին, խույ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտալոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԷ Դ-2----Դ-3	հատ	43.00	78800.00	3388400
116	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտալոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԷ Դ-4----Դ-4*	հատ	4.00	78800.00	315200
117	Մետաղական, խույ, մուգ մոխրագույն դռների տեղադրում Դ-5, Դ-5"	քմ	3.50	39400.00	137727
118	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	7.00	1773.00	12411
119	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5.25	37430.00	196612
120	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	13.58	19700.00	267526
121	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	100.11	35460.00	3549901
122	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64.17	29550.00	1896283
123	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	86.22	5910.00	509560
	Ընդամենը դռներ և պատուհաններ				16249890
	Հատակներ				
124	Հողի տոփանում խճաքարով	քմ	1680.00	492.50	827400
125	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնից	խմ	252.00	54175.00	13652100
126	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8,3կգ/քմ)	տն	13.94	354600.00	4944542
127	Խարամաբետոն 45մմ հաստ. B-12,5դասի թեթև բետոնով	քմ	2109.68	1773.00	3740463
128	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ. քիտումի մածիկի վրա	քմ	1912.90	1773.00	3391572
129	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	614.66	1477.50	908160

130	Յեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	1262.33	1674.50	2113772
131	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սունձումով	քմ	454.34	8865.00	4027724
132	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	33.42	11820.00	395024
133	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	33.42	1773.00	59254
134	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով	զձմ	171.80	1477.50	253835
135	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ.) հատակի երեսապատում, սունձումով	քմ	160.32	8865.00	1421237
136	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	զձմ	80.09	1182.00	94666
137	Վինիլային (հետերոգեն ՊՎԲ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սունձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	1178.59	9357.50	11028615
138	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԲ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սունձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.44	13297.50	3423245
139	Կավոլինից (4,5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սունձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116.80	9357.50	1092956
140	Յեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ. (շրիշակների պատրաստումով)	քմ	34.32	2265.50	77752
	Ընդամենը հատակներ				51452316
	Տանիք				
141	Ֆ-1 Մետաղական ֆերմանների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3.68	246250.00	906397
142	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ, ամրան Փ12A500C)	տն	0.18	522050.00	94437
143	Մետաղական ֆերմանների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6.62	246250.00	1629190
144	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0.20	522050.00	102203
145	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	19.47	512200.00	9971510
146	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1.16	522050.00	608120
147	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	31.31	39400.00	1233470
148	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1329.34	2462.50	3273504
149	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	35.23	221625.00	7807849
150	Նույնի երեսում (տակից) ՕՏՈ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	1749.19	3940.00	6891809
151	Գոլորշամեկուսիչ շերտի փոում	քմ	1749.19	985.00	1722952
152	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքարակե սալերով	քմ	1749.19	7880.00	13783617
153	ՕՏՈ սալերի տեղադրում 10մմ հաստ. (բիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	2019.70	3940.00	7957618
154	Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված բիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	2019.70	10835.00	21883450
155	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	35.23	24625.00	867539
156	ՕՏՈ սալի մասնակի լաքապատում	քմ	297.18	1970.00	585445
157	Ջրհորդանների պատրաստում 0.5մմ հաստ. ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	զձմ	156.90	4432.50	695459
158	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	19.00	14775.00	280725
159	Ջրհոս խողովակների տեղադրում 150x150մմ	զձմ	95.62	4432.50	423836
160	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0.71	591000.00	417837
161	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.71	29550.00	20892
	Ընդամենը տանիք				81157857
	Հարդարման աշխատանքներ				
162	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2847.05	2462.50	7010861
163	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	765.31	2462.50	1884576

164	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10.13	2462.50	24950
165	V-2, V-4, V-5 վիտրամների վերևի մասի լցափակում գիպսոկարտոնե հարթասալերով	քմ	12.90	3447.50	44473
166	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	1051.08	2462.50	2588285
167	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	379.62	2462.50	934814
168	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2879.00	1970.00	5671634
169	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	765.31	1970.00	1507661
170	Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1512.81	1970.00	2980236
171	Առաստաղների բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	314.09	1970.00	618757
172	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	435.35	2462.50	1072049
173	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	363.00	9850.00	3575550
174	Կախվի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերով 9,5մմ հաստության, ստատների տեղադրումով	քմ	461.73	3447.50	1591814
175	Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	քմ հորիզոնակ	332.00	985.00	327020
176	Կախվի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	65.53	4432.50	290462
177	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0.59	492500.00	291989
178	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԳՓ-021 նախաներկով	տն	0.59	29550.00	17519
	Ընդամենը հարդարման աշխատանքներ				30432650
	Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ				
179	Խամքարե զանգվածի պատրաստում աստիճանների տակ	խմ	15.40	2462.50	37923
180	Միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	8.70	44325.00	385628
181	Բետոնե աստիճանների պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	8.70	44325.00	385628
182	Աստիճանների երեսապատում 50մմ հաստ. բազալտե սալերով	քմ	14.45	15760.00	227732
183	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ. բազալտե սալերով	քմ	55.80	12805.00	714519
184	Խամքարե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ	խմ	9.20	13790.00	126868
185	Նույնի, միաձույլ բետոնե ծածկույթի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	2.40	44325.00	106380
186	Թեքահարթակի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	3.40	39400.00	133960
187	Նույնի, միաձույլ ե/բետոնե բազրիքների պատրաստում 120մմ հաստության B-12.5 դասի բետոնով	խմ	1.30	54175.00	70428
188	Ամրան Փ10A500C	տն	0.12	344750.00	41715
189	60x40x3մմ պողպատե ողղանկյուն խողովակներից բռնածող	տն	0.10	531900.00	55318
190	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԳՓ-021 նախաներկով	տն	0.10	29550.00	3073
	Ընդամենը արտաքին աստիճաններ և թեքահարթակներ				2289170
	Արտաքին հարդարում				
191	Պատերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 30մմ, ստորինը 70մմ հաստ.) բազալտե մանրաթելային սալերով	քմ	1411.60	4925.00	6952130
192	V-4, V-5 արտաքին վիտրամների վերևի մասի երեսապատում այլումինե "Alukobond" թիթեղով	քմ	3.50	27580.00	96530
193	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով մետաղացանցի տեղադրումով	քմ	1302.36	3447.50	4489886
194	Նույնի բարձրորակ ներկում դեկորատիվ, բաց գույնի, ճակատային ներկով	քմ	1302.40	2462.50	3207160
195	Պատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ. խարսխումով	քմ	172.50	14775.00	2548688
196	Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալերից 30մմ հաստ.	քմ	13.61	14775.00	201088
197	Բացվածքների լցափակում ապակեբլոկներով	քմ	0.96	295500.00	283680
198	Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում հարդարման աշխատանքների համար	քմ ուղ. պրոեկց.	523.00	985.00	515155
	Ընդամենը արտաքին հարդարում				18294316
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1.1 Համաշինարարական աշխատանքներ				348659799
	Ամբարձիչ				
171	Պտուտակային, ապակեպատ ամբարձիչ հաշմանդամ երեխաների համար 320կգ բեռնունակությամբ FORSTOR կամ համարժեք	հատ	1.00	2561000.00	2561000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Ամբարձիչ				2561000
	1.2 Ջեռուցում				
1	Նկող Այլումինե ջեռուցման սարքերի տեղադրում h=500մմ	սեկց	31.00	6895.00	213745

1.3 Օդափոխություն (նկուղ)					
1	Ներածման-արտածման սարք, Lն=1470խմ/ժամ, Lա=1320խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=6կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Lն=1470մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Lա=1320մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ	կ-տ	1.00	2659500.00	2659500
2	Օդափոխիչ կանալային L=125խմ/ժամ P=110Պա N=0,7կՎտ	հատ	1.00	591000.00	591000
3	Ճաղաչար պլաստմասայից Ф200մմ	հատ	5.00	1970.00	9850
4	Նոյնը 200x100	հատ	3.00	4925.00	14775
5	Նոյնը 200x200	հատ	1.00	985.00	985
6	Նոյնը 300x200	հատ	6.00	985.00	5910
7	Նոյնը 300x250	հատ	6.00	1477.50	8865
8	Օդի կարգավորիչ փական ձեռքի կարգավորումով Ф100մմ	հատ	5.00	2955.00	14775
9	Նոյնը, 100x100մմ	հատ	3.00	3940.00	11820
10	Նոյնը, 150x150մմ	հատ	2.00	4432.50	8865
11	Նոյնը, 200x100մմ	հատ	12.00	4432.50	53190
12	Օդատար ցինկապատ թիթեղից ձ=0.5 մմ	քմ	16.00	5417.50	86680
13	Օդատար ցինկապատ թիթեղից ձ=0.7մմ	քմ	89.90	2462.50	221379
14	Մետաղ օդատարների ամրացման համար	կգ	30.00	394.00	11820
					3699414
1.3 Օդափոխություն (նկուղ)					
1.4 Օդափոխություն 0,00 նիշից վերև					
1	Ներածման-արտածման սարք, Lն=3600խմ/ժամ, Lա=3200խմ/ժամ որը լրակազմված է՝ 1 օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=24կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Lն=3600մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Lա=3200մ3/ժամ, 6) աղմկախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1.00	4925000.00	4925000
